ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

ԵԱՔԴ/4325/02/17

«20» նոյեմբերի 2017թ. ք.Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Մ.Բունիաթյանս, քննարկելով թիվ ԵԱՔԴ/4325/02/17 քաղաքացիական գործով հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին,

«20» նոյեմբերի 2017թ.

ՈՐՈՇԵՑ

Հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի միջնորդությունը բավարարել:

Արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ արգելել դրա կատարումը մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը

Հայցի ապահովման մասին դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՊԱՀԱՆՋԱՏԵՐ	ՊԱՐՏԱՊԱՆ
«Արիկո-Գոռ» ՓԲԸ	ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն
ՀՎՀՀ՝ 03523596 գրանցման վկայական՝ 03Ա996767	սույն քաղաքացիական գործում ՀՎՀՀ-ն բացակայում է
հասցե՝ ք.Աբովյան, Արզնու խճուղի 4	հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 41ա

Կատարողական թերթը տրված է «20» նոյեմբերի 2017թ.:
Որոշումն ուժի մեջ է մտել «20» նոյեմբերի 2017թ.:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ, ք. Երևան, Հր.Ներսիսյան 10 /հեռ. 010-24-19-62/

ԴԴ20-Ե- 2563/18
ԵԱՔԴ/4325/02/17
14 12.2017թ.

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը
ք. Երևան, Հալաբյան 41ա

Ուղարկվում է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԱՔԴ/4325/02/17 քաղաքացիական գործով որոշումը՝ հայցի ապահովման միջոցները վերացնելու միջնորդությունը քննարկելու մասին և կատարողական թերթը:

Առդիր՝ որոշումը՝ 4 թերթից և կատարողական թերթը՝ 1 թերթից:

Դատավորի օգնական Ա.Ավագյան

ԵԱՔԴ/4325/02/17

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.12.2017թ. ք.Երևան

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Ռուբեն Բունիաթյանի, քարտուղարությամբ Անի Թադևոսյանի, մասնակցությամբ հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մարիամ Ղուշչյանի, պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության ներկայացուցիչ Արմեն Արսենյանի, երրորդ անձ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մելանյա Վարդանյանի, դռնբաց դատական նիստում, քննարկելով թիվ ԵԱՔԴ/4325/02/17 քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության միջնորդությունը՝ կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

«Արիկո-Գոռ» ՓԲԸ-ն հայց է ներկայացրել դատարան՝ ընդդեմ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության, երրորդ անձ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի՝ 23.09.2017թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը մասնակի անվավեր ճանաչելու և որպես հետևանք 23.09.2017թ. թիվ 2 արձանագրության 3-րդ կետով ընդունած որոշումը անվավեր ճանաչելու, ԳԲԽ-ԷՍ-2017/40 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2017թ. որոշմամբ ներկայացված հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2017 թվականի որոշմամբ բավարարվել է հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդությունը:

Դատարանը որոշել է արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ արգելել դրա կատարումը մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից 24.11.2017 թվականին միջնորդություն է ներկայացվել դատարան՝ խնդրելով վերացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները՝ հայտնելով, որ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն (այսուհետ նաև՝ ծառայություն) 22.11.2017թ. մուտք է եղել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր

իրավասության դատարանի կողմից 20.10.2017թ. տրված թիվ ԵԱՔԴ/4325/02/17 գործով կատարողական թերթը՝ հայցի ապահովման վերաբերյալ:

Համաձայն հիշյալ կատարողական թերթի՝ պետք է արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁ Բ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում արգելել դրա կատարումը մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից և թիվ ԵԱՔԴ/4325/02/17 քաղաքացիական գործով հնարավոր վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամանակահատվածի՝ այս պահին ոչ տեսանելի իրողությունից, ծառայությունը սույնով ներկայացրել է իր պահանջը և դիրքորոշում՝ կիրառված հայցի ապահովումը վերացնելու վերաբերյալ, ներքոնշյալ պատճառաբանությամբ.

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքների համակարգային վերլուծությունից և «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, 28-րդ հոդվածների տառացի մեկնաբանությունից ակնհայտ է դառնում ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կարևորությունը: Մասնավորապես, ծառայության հիմնական խնդիրը հարկադիր կատարման ապահովումն է, որն իրականացվում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքների և այլ իրավական ակտերի հիման վրա, կատարողական գործողությունների միջոցով և կոչված է ապահովելու անձանց իրավունքներն ու շահերը: Իսկ այդ կատարողական գործողություններն իրականացնելիս ծառայությունն իր աշխատանքը կազմակերպում է նաև փոստային ծառայության միջոցով:

Ծառայությունը՝ ի դեմս հարկադիր կատարողների, իր կատարողական գործողությունների ընթացքում կայացնում է որոշումներ՝ կատարողական վարույթի հարուցում, արգելանք դնելու, հետախուզում հայտարարելու, արգելադրված գույքը էլեկտրոնային աճուրդով իրացնելու, կատարողական վարույթն ավարտելու, կարճելու և այլն, որոնք պարտավոր է ուղարկել կատարողական վարույթի կողմերին: Այդ որոշումների մի մասը իրենից ներկայացնում է վարչական ակտ, հետևաբար՝ որոշակի իրավունքներ և պարտականություններ են սահմանում անձի համար: Վարչական ակտը՝ վարչական ակտի հասցեատիրոջ կողմից ստանալուց հետո հաջորդող օրվանից մտնում է օրինական ուժի մեջ, դրանով իսկ պայմանավորելով այդ անձի իրավունքների հետագա իրականացումը (վարչական ակտի պահանջների կատարում, վարչական ակտի բողոքարկում և այլն): Ծառայությունն իր աշխատանքը՝ կատարողական գործողությունների վերաբերյալ ծանուցումները կազմակերպում է փոստային ծառայության միջոցով, միջին հաշվարկով, ամսեկան ծառայության կողմից իրականացվում է 120.000 ծանուցում:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը որպես վարչական մարմին պարտավոր է հետևել ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին, այդ տեսանկյունից ծառայությունը հանդիսանում է վարչարարությամբ պատճառված վնասը հատուցելու պարտականություն ստանձնելու պոտենցիալ սուբյեկտ:

Սույն գործի շրջանակներում վիճարկվող գնումների նպատակով անհրաժեշտ է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության համար ձեռք բերել 500.000 հատ ծրարներ, որոնք նախատեսված է մինչև 2018 թվականի համար անցկացվելիք ընթացիկ տարվա գնումների կազմակերպումը ծառայության առջև դրված խնդիրների կատարման համար (ընթացիկ տարվա համար գնումները կազմակերպվում են ընթացիկ տարվա փետրվար-մարտ ամիսներին):

Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ հայցի ապահովման կիրառումը, խոչընդոտ է ստեղծում Ծառայության բնականոն գործունեությունը կազմակերպելու համար: Ընդ որում հայցի ապահովման պահպանման պարագայում Ծառայությունը կրում է

ոչ միայն իր կողմից իրականացվող ծանուցումները ոչ պատշաճ կատարելու պարտականության կատարման ռիսկը, այլ նաև կարող է կրել ոչ պաշաճ ծանուցման ապահովման հետևանքով հնարավոր պատճառված վնասի (վարչարարությամբ պատճառված վնասի) հատուցում տալու պարտականություն:

Եվ վերջապես, միայն հնարավոր վնասները չէ, որ կարող է խոչընդոտել ծառայության բնականոն աշխատանքին, ինչպես արդեն նշել են, ծառայությունը խնդիր ունի իր առջև դրված պարտականությունները պատշաճ կատարելու: Եվ հետևաբար, հնարավոր վնասների ապահովմամբ չի կարող լուծվել ծառայության կողմից անհրաժեշտ ծանուցումները ուղարկելու խնդիրը, որպիսի պարագայում, թեկուզև երաշխավորված լինելով հնարավոր վնաս կրելու վտանգից, միևնույնն է ծառայությունը չի կարող ձերբազատվել պարտականությունները պատշաճ կատարելու վտանգից: Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը որպես վարչական մարմին պարտավոր է հետևել ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին:

Հաշվի առլեվ վերոգրյալը՝ պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը խնդրել է վերացնել թիվ ԵԱԲԴ/4325/02/17 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2017 թվականին կայացված հայցի ապահովում կիրառելու մասին որոշումը:

Պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության ներկայացուցիչ Արմեն Արսենյանը պնդել է ներկայացված միջնորդությունը:

Երրորդ անձ «Բլանկիրատ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մելանյա Վարդանյանը չի առարկել ներկայացված միջնորդության դեմ՝ խնդրելով նույնպես վերացնել կիրառված հայցի ապահովման միջոցները:

Հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Մարիամ Ղուշչյանն առարկել է ներկայացված միջնորդության դեմ:

Քննարկելով ներկայացված միջնորդությունը և ուսումնասիրելով ներկայացված նյութերը՝ Դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:

Նույն օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ հայցի ապահովման միջոցներն են՝

1) պատասխանողին պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա հայցագնի չափով արգելանք դնելը,
2) պատասխանողին որոշակի գործողություններ կատարելն արգելելը,
3) այլ անձանց կողմից վեճի առարկային վերաբերող որոշակի գործողությունների կատարումն արգելելը,
4) գույքն արգելանքից հանելու վերաբերյալ հայց հարուցելու դեպքում՝ գույքի իրացումը կասեցնելը,
5) պատասխանողի մոտ գտնվող՝ հայցվորին պատկանող գույքի վրա արգելանք դնելը՝ անհապաղ կամ 5 օրը չգերազանցող ժամկետում:

Նույն օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ գործը քննող դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ, կարող է վերացնել հայցի ապահովումը:

Տվյալ դեպքում Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 20.11.2017 թվականի որոշմամբ բավարարվել է հայցվոր «Արիկո-Գոռ» ՓԲԸ-ի հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդությունը:

Դատարանը որոշել է արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված

«ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ արգելել դրա կատարումը մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով այն, որ մրցույթը հայտարարվել է «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով, իսկ կիրառված հայցի ապահովման պայմաններում կարող է խախտել երրորդ անձանց իրավունքները, ուստի Դատարանը գտնում է, որ նման պայմաններում պետք է վերացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2017 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները, այն է՝ արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքել արգելելու, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դրա կատարումն արգելելու վերաբերյալ:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 144-րդ և 145-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

Միջնորդությունը բավարարել:

Վերացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2017 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները, այն է՝ արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքել արգելելու, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում՝ մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դրա կատարումն արգելելու վերաբերյալ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ԵՎ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹ

ԵԱՔԴ/4325/02/17

«13» դեկտեմբերի 2017թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով թիվ քննարկելով թիվ ԵԱՔԴ/4325/02/17 քաղաքացիական գործով պատասխանող ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության միջնորդությունը՝ կիրառված հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին,

«13» դեկտեմբերի 2017թ.

ՈՐՈՇԵՑ

Միջնորդությունը բավարարել:

Վերացնել Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 21.11.2017 թվականի որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները, այն է՝ արգելել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայության կարիքների համար «տպագիր ծրարներ» ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԴԱՀԿ-ԳՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով հաղթող ճանաչված «Բլանկիրատ» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքել արգելելու, իսկ նման պայմանագիր կնքված լինելու դեպքում մինչև սույն քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը դրա կատարումն արգելելու վերաբերյալ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ՊԱՀԱՆՋԱՏԵՐ	ՊԱՐՏԱՊԱՆ
ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն	«Արիկո-Գոռ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 03523596 գրանցման վկայական՝ 03Ա996767
հասցե՝ ք.Երևան, Հալաբյան 41ա	հասցե՝ ք.Աբովյան, Արզնու խճուղի 4

Կատարողական թերթը տրված է «13» դեկտեմբերի 2017թ.:
Որոշումն ուժի մեջ է մտել ««13» դեկտեմբերի 2017թ:

Ծանոթագրություն: Կատարողական թերթը կարող է կատարման ներկայացվել որոշումն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ